600.0093.11.03.09

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2009 թվականի №93Ն

քաղ.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №358Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում» (այսուհետ՝ Կանոններ), կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

   1) Կանոնների 2-րդ գլխի 13.5 կետը շարադրել նոր խմբագրությամբ. «13.5. Հայաստանի Հանրապետության այն տարածքներում, որոնց կառուցապատումը նախատեսվում է իրականացնել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հաստատած հեռանկարային զարգացման ծրագրերով, նոր սպառողների միացումը էլեկտրական ցանցին իրականացվում է՝ ելնելով տվյալ տարածքի հեռանկարային զարգացման ծրագրի իրականացման ժամկետներից:»:

2) Կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.6 և 13.7 կետերով.

«13.6 Սույն կանոնների 13.2, 13.3 և 13.4 կետերով սահմանված ժամկետները չեն տարածվում 0.22 կՎ լարման առևտրային սպառողների և 0.22 կՎ լարման բնակիչ-բաժանորդների սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման դեպքերի վրա: 0.22 կՎ լարման առևտրային սպառողների և 0.22 կՎ լարման բնակիչ-բաժանորդների նոր կամ վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը՝ սկսած դիմողի կողմից էլեկտրական ցանցին միացման դիմումը մատակարարին ներկայացնելու օրվանից:

13.7. Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման աշխատանքների ավարտի և էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու առավելագույն ժամկետները չեն կարող գերազանցել.

1) 0,22 կՎ լարման առևտրային սպառողների և 0.22 կՎ լարման բնակիչ-բաժանորդների համար միացման (ուժեղացման) դեպքում՝ 60 օր, եթե սպառողն ավելի երկար ժամկետ չի առաջարկում:
2) 0.4 կՎ և բարձր լարման սպառողների մինչև 400 կՎԱ-ն ներառյալ պահանջվող հզորության դեպքում՝ 6 ամիս, եթե սպառողն ավելի երկար ժամկետ չի առաջարկում:
3) 0.4 կՎ և բարձր լարման սպառողների 401 կՎԱ-ից մինչև 1000 կՎԱ-ն ներառյալ պահանջվող հզորության դեպքում՝ 12 ամիս, եթե սպառողն ավելի երկար ժամկետ չի առաջարկում:
4) 0.4 կՎ և բարձր լարման սպառողների 1001 կՎԱ-ից բարձր հզորության պահանջարկի դեպքում՝ 24 ամիս, եթե սպառողն ավելի երկար ժամկետ չի առաջարկում:»:

3) Ուժը կորցրած ճանաչել Կանոնների 2-րդ հավելվածի՝ Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման պայմանագրի 3.2 և 3.3 կետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան

11 մարտի 2009թ.